Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը հաճախորդի համար տոկոսագումարները և այլ վճարները սահմանված ժամկետներում և չափերով կատարելու դեպքում:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

I –տարեկան փաստացի տոկոսադրույքն է, որը վարկառուի ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

A – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

n – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը:

N – վարկի մարմանն ուղղված վճարի թիվը.

Kn -վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումարը.

Dn–վարկի տրամադրման օրից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրը ընկած ժամանակահատվածը՝ արտահայտված օրերի թվով:

Փաստացի տարեկան տոկոսադրույքի հաշվարկի օրինակ.

Դիցուք հաճախորդին տրամադրվում է 2,000,000 ՀՀ դրամ գումարի չափով ոսկու գրավադրմամբ վարկ, 3 ամիս մարման ժամկետով, տարեկան 13% տոկոսադրույքով, Վարկի մարումը ժամկետի վերջում, տոկոսագումարների գանձումը՝ վարկը ստանալու պահին ամբողջ ժամանակահատվածի համար

Հաճախորդի ծախսերն են՝

Վարկային հայտի ուսումնասիրության, վարկային հաշվի վարման և սպասարկման միջնորդավճար՝ 10,000 ՀՀ դրամ,

Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 16,11% :

Դիցուք հաճախորդին տրամադրվում է 2,000,000 ՀՀ դրամ ումարի չափով ոսկու գրավադրմամբ վարկ, 24 ամիս մարման ժամկետով, տարեկան 17% տոկոսադրույքով, Վարկի մարումը ժամկետի վերջում, տոկոսագումարների գանձումը՝ ամսական

Հաճախորդի ծախսերն են՝

Վարկային հայտի ուսումնասիրության, վարկային հաշվի վարման և սպասարկման միջնորդավճար՝ 10,000 ՀՀ դրամ,

Տվյալ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 21.56% :